

17

Տրամադրանք
08.07.2014թ
11314268

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

<< 12 >> 08 2014 թ. N 11 -Ն

<< 18 >> հունիսի 2014 թ. N 75 -Ն

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԶԵՎԱԶԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի N 657-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի 1-ին ենթակետը և ՀՀ կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1024-Ն որոշման 2-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Ն Ք

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության <<Նորք>> տեղեկատվավերլուծական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգից Հայաստանի Հանրապետության գինվորական կոմիսարիատին տրամադրում է նախազորակոչային և զորակոչային տարիքի վերջին փորձաքննության ժամանակ հաշմանդամ ճանաչված կամ չճանաչված անձի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

- 1) անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը,
- 2) անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, հաշվառման վայրը,
- 3) սահմանված հաշմանդամության խումբը,

4) նախորդ վարույթում հաշմանդամության խումբը (եթե ունեցել է),

5) հաշմանդամություն չսահմանելու (դադարեցնելու) ամսաթիվը:

2. Սույն հրամանի 1-ին կետում նշված տեղեկությունները տրամադրվում են էլեկտրոնային եղանակով՝ MS Excel ծրագրով, հանրապետական գինվորական կոմիսարիատի ծառայողական փոստի հասցեով՝ մեկամսյա պարբերականությամբ կամ վեբ ինտերֆեյս տրամադրելու միջոցով:

«Արտադրանքային հսկողություն»


Ս. Օսկանյան



< 12 >

«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար»

ԱՍԱՏՐՅԱՆ



2014թ.